«Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ԱՆՁԱՆՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» Հայաստանի Հանրապետության 2014 թվականի փետրվարի 4-ի ՀՕ-1-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածը 3-րդ մասից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր մասերով.

«4. Սույն օրենքի իմաստով.

- գիտական աշխատանք է համարվում Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ գիտական կազմակերպությունում գիտնականի կամ գիտական աշխատողի կողմից բացառապես գիտահետազոտական, փորձակոնստրուկտորական, գիտամանկավարժական, փորձատեխնոլոգիական, նախագծակոնստրուկտորական, նախագծատեխնոլոգիական, հետախուզական աշխատանքներ կատարելը,
- ստեղծագործական աշխատանք է համարվում բացառապես մշակույթի և արվեստի երկեր, գեղարվեստական, գեղարվեստական ժողովրդական ստեղծագործություններ և արհեստներ, բանահյուսություն, բարոյագիտական և գեղագիտական գաղափարատիպեր (իդեալներ), վարվեցողության կանոններ և ձևեր, լեզուներ, բարբառներ և խոսվածքներ, ազգային ավանդույթներ և սովորույթներ, պատմաաշխարհագրական տեղանուններ, մշակութային գործունեության մասին գիտական հետազոտությունների արդյունքներ և մեթոդներ, մշակութային ժառանգության առարկաներ (օբյեկտներ) ստեղծելը կամ մեկնաբանելը,
- մանկավարժական աշխատանք է համարվում Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ հանրակրթական և մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունում բացառապես ուսուցիչ, դասախոս (դոցենտ, պրոֆեսոր), ամբիոնի վարիչ աշխատելը։

5. Սույն օրենքի իմաստով գիտական կազմակերպություն է համարվում.

- Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիան (ներառյալ ակադեմիայի համակարգում գործող գիտական, գիտատեխնոլոգիական կազմակերպությունները, ակադեմիայի բաժանմունքները և ակադեմիայի համակարգում ներառված պետական ոչ առևտրային կազմակերպությունները),
- բարձրագույն ուսումնական հաստատությունները, բարձրագույն մասնագիտական ուսումնական հաստատությունների գիտական ստորաբաժանումները,
- այլ կազմակերպությունները, անկախ իրենց կազմակերպական-իրավական ձևից, որոնք հիմնականում իրականացնում են գիտական կամ գիտատեխնիկական գործունեություն, զբաղվում են գիտական կադրերի պատրաստմամբ:

6. Սույն օրենքի 4-րդ մասի իմաստով անձի գործունեությունը չի համարվում գիտական, ստեղծագործական կամ մանկավարժական, եթե անձը տվյալ կազմակերպությունում կատարում է նաև այլ՝ սույն օրենքի իմաստով գիտական, ստեղծագործական կամ մանկավարժական չհամարվող աշխատանք (իրականացնում է այլ լիազորություններ կամ ի լրումն սույն օրենքի իմաստով գիտական, ստեղծագործական կամ մանկավարժական աշխատանքի՝ կատարում է նաև վարչական (կառավարչական), վարչատնտեսական, ինժեներատեխնիկական, արտադրական, ուսումնաօժանդակ կամ այլ աշխատանքներ):

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: Սույն օրենքի դրույթները տարածվում են այն դեպքերի վրա, երբ Օրենքով սահմանված կենսաթոշակ նշանակելու դիմումը ներկայացվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո: